թարգմանված է իտալերենից

Հռոմի Առևտրի Պալատ

Արձ. CEW/13451/2018/CRM0735 12.12.2018թ.

# ՀՌՈՄԻ ԱՌԵՎՏՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ

## -ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐ-

## Կանոնավոր բաժնում գրանցման տեղեկանք

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| Հռոմի Ձեռնարկությունների Ռեգիստրում գրանցման համարը և հարկային կոդը | 06293511009 |
| գրանցման ամսաթիվը | 12.12.2000թ. |
| գրանցված է Կանոնավոր բաժնում | 12.12.2000թ. |
| Տնտեսական Վարչական Գրանցամատյանում գրանցման համարը | 961245 |
| Անվանումը | ԱՅԵՌԴԻ Էնջինիրինգ-Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն |
| Իրավաբանական ձևը | ՍՊԸ |
| Իրավաբանական հասցեն | Հռոմ /RM/, Լունգոտևերե դելլե Նավի 30 CAP 00196 |
| էլեկտրոնային փոստի հասցեն | IRDENG@PEC.IRDENG.COM |
| Հիմնադրվել է | 18.10.2000թ-ին կազմված ակտով |
| Իրավաբանական անձի նույնականացման համարը | 815600746745119B291 |
| Վավերականության ժամկետը | 08.09.2019թ. |
| Ընկերության գործունեության ժամկետը մինչև | 31.12.2050թ. |

### Գործունեության նպատակը

Ընկերության գործունեության նպատակն է իրականացնել աշխատանքների կատարման հնարավորությունների ուսումնասիրություն, հետազոտություններ, խորհրդատվություններ, աշխատանքների նախագծում և/կամ ղեկավարում, տեխնիկական-տնտեսական համապատասխանության գնահատում և/կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրություն, և մասնավորապես.
ա/նախաձեռնությունների ստանձնում և ծառայությունների իրականացում նախագծման, կառուցման և քաղաքացիական և ենթակառուցվածքային աշխատանքների պահպանման բնագավառում, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական,
բ/նախաձեռնությունների ստանձնում և ծառայությունների մատուցում ուսումնասիրության և նախագծման բնագավառում, գործունեությունների և/կամ ծառայությունների պահպանման նպատակով, ուսումնասիրության և պլանավորման բնագավառում՝ տարածքների պահպանման և վերարտադրման նպատակով, և կատարողականության նախնական ուսումնասիրությունների թողարկման բնագառում,

գ/նախաձեռնությունների ստանձնում և ծառայությունների մատուցում շրջակա միջավայրի բարելավման շրջանակներում՝ ջրի, օդի, հողի որակը իջեցնող ցանկացած գործոններից, ներառյալ ռումբերից և պատերազմական սարքավորումներից,
դ/Անհատ խորհրդատուների և մասնագետների, որոնք գրանցված են համապատասխան կոլեգիաներում, կողմից կատարված աշխատանքների համակարգում և տարածումնախորդ կետերում նշված գործունեություններին վերաբերվող հարցերում,
ե/Պետական և մասնավոր կազմակերությունների հաշվին կապալի, կառույցների հատկացման և/կամ պետական և մասնավոր ծառայությունների կառավարման պայմանագրերի հատկացման գործընթացների նախապատրաստում և կառավարում, նախապես բացառելով ցանկացած միջնորդային գործունեություն:
Այդ նպատակով ընկերությունը կարող է պետական և մասնավոր կազմակերպություններից և միջազգային բնույթի կազմակերպություններից և մարմիններից անմիջականորեն ստանձնել պատվերներ իր սեփական գործունեության ծառայությունների և աշխատանքների համար, մասնակցելով, եթե նախատեսված է, կապալի պայմանագրերի և/կամ կոնցեսիայի հատկացման գործընթացներին,
Ընկերությունը կարող է իր սեփական գործունեությունն իրականացնել ինչպես Իտալիայում, այնպես էլ արտասահմանում, և միմիայն ընկերության գործունեության նպատակին հասնելու համար վերոնշյալ նպատակի շրջանակներւմ, կարող է իրականացնել արդյունաբերական, առևտրային, գույքային, անշարժ գույքային և ֆինանսական գործողություններ, և ըստ այդմ նաև տրամադրել իրական և անձնական երաշխիքներ և մասնակցություններ և շահութառություն ունենալ այլ ընկերություններում և ձեռնարկություններում, որոնք ունեն նմանատիպ, հարակից և ամեն դեպքում սեփականի հետ կապված գործունեության նպատակ: Նախագծման աշխատանքները կկատարվեն համապատասխան մասնագիտական կոլեգիաներում գրանցված մասնագետների կողմից, անվանապես նշանակված և անձամբ պատասխանատու:

## Կառավարման համակարգը և վերահսկումը

-Միակ կառավարիչ
Պաշտոնավարող անդամների քանակը. 1
Պաշտոնավարման ժամկետը. մինչև հետկանչում

-Վերստուգող հանձնաժողով
Պաշտոնավարող անդամների քանակը. 1
Պաշտոնավարման ժամկետը. մինչև հաշվեկշռի հաստատում
մինչև 31.12.2018թ.

## Տեղեկություններ կանոնադրության վերաբերյալ

Կանոնադրական իրավունքներ.
Կառավարման մարմինը, համաձայն նշանակման ակտում մասնակիցների կողմից սահմանված կառուցվածքի, օժտված է ամենալայն իրավունքներով ընկերության ներքական և արտաքին կառավարման համար, և իրավասու է իրականացնել բոլոր գործողությունները, որ անհրաժեշտ կհամարի ընկերության գործունեության նպատակին հասնելու համար, որոնք օրենքով, հիմնադիր ակտով կամ կանոնադրությամբ վերապահված չեն մասնակիցների ժողովի բացառիկ իրավասությանը:

Կառավարման մարմինը կարող է լիազորագրերի միջոցով նշանակել ընկերության լիազոր ներկայացուցիչների՝ առանձին գործողությունների կամ գործողությունների կատեգորիաների համար:
Ընկերության անունից ստորագրելը և երրորդ անձանց առջև և դատարանում ներկայացուցչական իրավունքը պատկանում է միակ կառավարչին, Կառավարման Խորհրդի Նախագահին և Կառավարման Խորհրդի առանձին լիազորված անդամների, եթե նշանակված են, ինչպես նաև կառավարիչներին առանձին և միասին, նույն եղանակներով և սահմանափակումներով, որոնցով նրանց տրվել է ընկերությունը կառավարելու իրավունքը:
Կառավարիչների իրավասությունների սահմանափակումները, որոնք նշված են հիմնադիր ակտում կամ նշանակման ակտում, եթե նույնիսկ հրապարակված են, չեն հակադարձվում երրորդ անձանց դեմ, բացառությամբ եթե չի ապացուցվում, որ վերջիններս դիտավորյալ գործել են ի վնաս ընկերության:

Շահույթի և վնասի բաշխումը մասնակիցների միջև.
Զուտ շահույթը բաշխվում է մասնակիցների միջև Քաղաքացիական Օրենսգրքի 2478բիս հոդվածով նախատեսված պայմաններում, պահուստային ֆոնդի օգտին վերջինից 5 տոկոս մասնահանումից հետո, մինչև վերջինս չի կազմում ընկերության կանոնադրական կապիտալի 1/5, բացառությամբ մասնակիցների այլ որոշման և բացառությամբ օրենքի դրույթների:

Դրույթներ հրաժարման վերաբերյալ
Տեղեկատվությունն առկա է կանոնադրության/հիմնադիր ակտի մեջ:

Դրույթներ նախապատվության իրավունքի վերաբերյալ
Տեղեկատվությունն առկա է կանոնադրության/հիմնադիր ակտի մեջ:

Թարմացված կանոնադրության ներկայացում.
Ընկերության կանոնադրության նոր տեքստի հաստատում
Փոփոխություն հոդված 4 կետ 1. «Կանոնադրական կապիտալը կազմում է 300.000Եվրո և բաշխված է բաժնեմասերի:

Տեղեկություններ գույքի և ֆինանսների վերաբերյալ

Կանոնադրական կապիտալը Եվրոյով.

| | |
|---|---|
| սահմանված | 300.000,00 |
| բաշխված | 300.000,00 |
| վճարված | 300.000,00 |

վճարումը գումարով

*Կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական միջոցներ.*
- Պարտատոմսեր

Ընկերությունը կարող է թողարկել պարտատոմսեր:
-Կառավարիչների միաձայն որոշմամբ, կանոնադրական կապիտալը չգերազանցող գումարով: Կառավարիչները կարող են թողարկել այլ պարտատոմսեր միայն նախորդ թողարկումն ամբողջությամբ մարելուց հետո:
-Մասնակիցների որոշմամբ, կանոնադրական կապիտալի 2/3 մեծամասնությունը ներկայացնող ձայներով կայացված որոշմամբ, վերջին հաստատված հաշվեկշռով հաստատված կապիտալի և առկա պահուստի գումարի չափով: Մասնակիցների

որոշումը կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ կառավարիչների կողմից կմարվի ցանկացած այլ պարտատոմսերի թողարկում:
Սույն հոդվածին համաձայն թողարկված պարտատոմսերը կարող են ստորագրվել միայն հատուկ օրենքներով նախազգուշական վերահսկողության ենթակա պրոֆեսիոնալ ներդրողների կողմից: Պարտատոմսերի հաջորդական շրջանառության դեպքում դրանք փոխանցողը պատասխանատու է գնորդների հանդեպ ընկերության վճարունակության համար, եթե նրանք պրոֆեսիոնալ ներդրող կամ նույն ընկերության մասնակից չեն:
Պարտատոմսերի թողարկման մասին որոշումը նախատեսում է փոխառության պայմանները և մարման եղանակները, և կառավարիչների կողմից գրանցվում է Ձեռնարկությունների Ռեգիստրում: Բացի այդ այն կարող է նախատեսել, որպեսզի, պարտատոմսերի սեփականատերերի մեծամասնության նախնական համաձայնությամբ, ընկերությունը կարողանա փոփոխել այդ պայմաններն ու եղանակները:
Բացառություն են կազմում առանձին կատեգորիաների ընկերությունների և գործունեության վերապահումների վերաբերյալ գործող հատուկ օրենքի դրույթները:

## Գործունեությունը

Ձեռնարկության կողմից իրականացվող հիմնական գործունեությունը.
Տեխնիկական, տնտեսական և ֆինանսական հնարավորությունների ուսումնասիրություն և տեխնիկական աջակցություն Եվրոմիության կողմից ստեղծված կազմակերպությունների կողմից առաջադրված վերակառուցման գործունեության մեջ:
Ձեռնարկության գործունեության սկիզբը. 15.01.2001թ.

## Պաշտոնատարները կամ պաշտոնները

*ՕՐՍԻՆԻ Պաոլո /Ձեռնարկության ներկայացուցիչ/
ծնված 19.01.1960թ. Հռոմում /RM/
ՀՎՀՀ՝ RSNPLA60A19H501T
• միակ կառավարիչ, նշանակված 31.10.2013թ. ակտով
ներկայացվել է 31.10.2013թ.
պաշտոնավարման ժամկետը. մինչև հետկանչումը
Գրանցման ամսաթիվը. 12.11.2013թ.

*ՊԻՇԻՆԻ Լուիզա
ծնված 04.07.1958թ. Լուկյանո՝ին Տևերինայում /TR/
ՀՎՀՀ՝ PSCLSU58L44E792V
• Վերստուգող, նշանակված 08.08.2016թ. ակտով
պաշտոնավարման ժամկետը. մինչև 31.12.2018թ. հաշվեկշռի հաստատումը
Գրանցման ամսաթիվը. 08.09.2016թ.

Օրինական Ռևիզորների Ռեգիստր
թիվ 46321 առ 12.04.1995թ.
տրված Էկոնոմիկայի և Ֆինանսների Նախարարության կողմից

*ԴԻԵԶ Սանտակլարա Ալվարո
ծնված 29.03.1973թ. Վալլադոլիդում /Իսպանիա/
ՀՎՀՀ՝ DZSLVR73C29Z131C
• Հատուկ լիազոր, նշանակված 22.01.2018թ. ակտով

Գրանցման ամսաթիվը. 27.02.2018թ.
Լիազորություններ
***Ակտ թիվ 59394 առ 22.01.2018թ.***
1/Մասնակցի, առանց որևէ սահմանափակման, ցանկացած աշխատանքների, ծառայությունների, խորհրդատվության, տեխնիկական աջակցության մրցույթի /տենդեր/ և բանակցությունների գործընթացի, և աջակցություն ցուցաբերի ցանկացած եղանակով, պաշտոնապես կամ մասնավոր եղանակով, պատրաստի, բանակցի, ստորագրի, ենթարկի, և եթե անհրաժեշտ է, բարելավի համապատասխան կարևորության առաջարկները կամ օֆերտաները, և, եթե անհրաժեշտ է, ընդհանրապես պարզաբանումներ տա, գործի ցանկացած հանգամանքում,
2/հանդես գա ցանկացած պայմանագրում աշխատանքների, ծառայությունների կամ մատակարարումների համար, ցանկացած պետական և մասնավոր մարմնի հետ, բացի այդ կատարելով գույքի հավելումներ, փոխարինումներ, փոփոխություններ կամ փոխակերպումներ:
3/բանակցի և ստորագրի պայմանագրեր ցանկացած խորհրդատվական ընկերության կամ տեխնիկական աջակցության ձեռնարկությունների հետ, ստորագրի և ընդունի ծառայությունների, գործերի ժամանակավոր կամ պաշտոնական հանձնումներ և համապատասխան վճարումներ և պայմանագրեր,
4/հիմնի ցանկացած կազմակերպություն, ժամանակավոր համատեղ ձեռնարկություն կամ ցանկացած տեսակի ընկերակցություն, կազմի և հաստատի համապատասխան համաձայնագրերը, ընդունի պայմանները, վճարի դրամարկղային և այլ գումարները, և ընդունի լուծումն ու լուծարումը,
5/օգտագործի ընկերության ընթացիկ հաշիվները, որևէ բանկում կամ այլ վայրում, յուրաքանչյուր գործարքի համար մինչև 12.000,00Եվրո, թողարկի չեկեր, պահանջի չեկային գրքույկներ, փոխանցման օրդերներ, պահանջի հաշվից քաղվածքներ և հաստատի կամ քննարկման դնի ընթացիկ հաշիվներ, եթե նպատակահարմար է համարում,
6/աշխատանքի ընդունի ցանկացած աշխատակցի ներկայացուցչական գրասենյակում կամ մասնաճյուղերում,
7/ներկայանա և հանդես գա ցանկացած ատյանի, կառավարման ձև դատարանում և պետական մարմիններում, ցանկացած կարգի կամ կատեգորիայի մարմիններում, ընդունի ցանկացած օրինական հայց, հետևի խնդիրներին մինչև դրանց լուծումը, ներկայացնի հայցեր, վեճ հարուցի և հարցեր ներկայացնի ցանկացած փուլում:

Երկրորդական գրասենյակներ և տեղական միավորներ

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Տիրանա Պրուգա 4 Շկուրտի Պալլատի 26ՇԿ, 2 Ալբանիա

Իրականացվող գործունեությունը.
Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 10.05.2011թ.

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Քիշնև Արմենեասկա փողոց 44/1 ՄԴ 2012, 44/1 Մոլդավիա

Իրականացվող գործունեությունը.

Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 22.08.2012թ.

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Սկոպյե Իլինդեն ԲԼՎԴ, 47/1-2 Մակեդոնիա

Իրականացվող գործունեությունը.
Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 03.09.2009թ.

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Բակի Կալիլ Մամմադքուլուզադե, 85/189 Ադրբեջան
ԱԶ1078 տարածք Նասիմի շրջան Ֆալեզ Ֆլազա 6-րդ հարկ

Իրականացվող գործունեությունը.
Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 06.10.2010թ.

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Երևան 4/7 Ամիրյան փողոց, 4/7 Հայաստան
Իրականացվող գործունեությունը.
Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 25.03.2015թ.

-Տեղական միավոր Գործունեության գրասենյակ
Թբիլիսի Ալ. Կազբեգի պողոտա գրասենյակ թիվ 6, 24Բ Վրաստան
Սաբուրթալո շրջան տարածք

Իրականացվող գործունեությունը.
Ուսումնասիրությունների և հետազոտությունների, խորհրդատվական և մանրամասն պլանավորման ծառայությունների իրականացում, աշխատանքների ղեկավարում և տեխնիկական, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների գնահատում:
Բացման օրը. 18.09.2014թ.

Սույն փաստաթուղթը պարունակում է նորություններ/տվյալներ՝ գրանցված Ռեգիստրում տվյալ օրը:

| | |
|---|---|
| Գանձված է կնիքների համար | 5,00Եվրո |
| Ընդհանուր | 5,00 Եվրո |
| Ամբողջը՝ արտահայտած լիրով | 9681 |

Դիմողի խնդրանքով տրվում է սույն տեղեկանքը առանց կնիքի տուրքի՝ ներկայացնելու ըստ պահանջի:
Այլ նպատակներով օգտագործումը մնում է օգտատիրոջ պատասխանատվության տակ:

Համաձայն ՀՆ 28.12.2000թ. թիվ 445 դեկրետի 40 հոդվածի սույն տեղեկանքը տրվում է ներկայացնելու միայն արտասահմանում:
Բացի այդ, հայտարարվում է, որ վերոնշյալ սուբյեկտի անվամբ նշված գրասենյակում չեն գրանցվել սնանկության կամ մրցակցային գործառույթի վերաբերյալ հայտարարություններ:
ստորագրություն, կնիք

փաստաթղթի վերջը

Ես, ներքոստորագրյալ Ֆեդերիկա Ավիկոս, նոտար Հռոմում, գրանցված Հռոմի, Վելլետրիի և Չիվիտավեքքիայի միացյալ նոտարական կոլեգիայում, հայտարարում եմ, որ սույն լուսապատճենը, բաղկացած 6 էջից, համապատասխանում է Պաոլո Օրսինիի կողմից, ծնված 19.01.1960թ. Հռոմում, ում ինքնությունը ես՝ նոտարս, ստուգել եմ, ինձ ներկայացված բնօրինակին, որը տրվում է ՀՆ 445/2000 դեկրետի համաձայն:
Հռոմ, Ֆլամինիա փողոց 330, 11.03.2019թ.
Նոտարի ստորագրությունը և կնիքը

ԱՊՈՍՏԻԼ

Տրված Հռոմում (Իտալիա), 10.04.2019թ., թիվ 2155, Հռոմի Հանրապետական Դատախազության կողմից

Լեգալիզացիայի հարցերով պատասխանատու ստորագրություն, կնիք

Տեքստի թարգմանությունը կատարված է լրիվ, ճիշտ և ամբողջությամբ
ՔՐԻՍՏԻՆԵ ՆԱՐԻՆՅԱՆԻ կողմից

**Նոտարական ակտի կոդ:** 545-20190429-67-3813651
**Նոտարական ակտի գաղտնագիր:** F78HBK

երկու հազար տասնինը թվականի ապրիլի քսանինը

Ես, ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ ԱՏՈՄ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆՍ, վավերացնում եմ տվյալ տեքստի իտալերեն լեզվից հայերեն լեզվով թարգմանչի ստորագրության իսկությունը:

<Նոտարիատի մասին> ՀՀ օրենքի 68 հոդվածի համաձայն հաստատում եմ փաստաթղթի թարգմանությունը կատարած թարգմանչի ստորագրության իսկությունը, այլ ոչ թե դրանում շարադրված փաստերը:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 8356

Գանձված են պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և հինգ հարյուր ՀՀ դրամ ծառայության վճար, համաձայն <Պետական տուրքի մասին> և <Նոտարիատի մասին> ՀՀ օրենքների:

Նոտար ............................................................ Ատոմ Գրիգորիի Հայրապետյան